պարանս, և եկեղեցի մեծ և հոյակապ յամին 671, որ և բաց ի գմբէթէն՝ կանգուն կայ մինչև ցայսօր հազարամեայ արձանագրութեամբք. են առ նմին և ճեացուածք գղեկի: — Ձեզնից հիւսիսոյ նորա ի կողս Արագածոտ կայ կօշ կամ կոաշ աւան, յորում նըստէր կուրացեալն Տիրան արքայ եղկելի, և առակն ՚ջական լեալ Թոռին իւրում Գնելոյ՝ վասն այն անգ սպանաւ հրամանաւ որգւոյ իւրոյ Արշակայ. են և առ նովաւ աւերակք. և մերձ է ի սա լճակն յորմէ Մեծամօրի (որ և Սեաւ ջուր) ելանէ: Ձեզնից սորա ի ձորավայրս վիմուտս կան վիշապ, Տէղեր և Ածո, բազում աւերակք. ի յեանուշն Թաղեցին նախարարք Հայոց զոսկերս Թագաւորացն Արշակունեաց Թափեալ յաւերածոտ և պղծադործ ձեռաց Պարսից, ի գերուԹենէն կամախայ (61) և ցարդ պատուի սեղին յայլազգեաց իբրև սրբազանի իրիք վայր: — Ձեզնից սոցա կայ հին գեհն ԱՆԲԵՐԴու կամ ԲԻՒՐԱԿԱՆայ, որոյ մնան կիսաւեր ամրոցք և եկեղեցիք ի ձորամէջս, նոյնպէս և ԱԱՓարաՀ տաՃկաձեակ գեղջ. իսկ ԱՆԲԵՐԴ բնակեն Հայք 40 տուն: Ձեզնից նորա կան Լաչէնան և Փարպի գեօղք և մենաստան, յանուն Ղազարայ Փարպեցւոյ Թարգմանչի, զորոյ և զգեստման ցուցանեն անգ. վտակք մանունք անցանեն առ Անբերդաւ և փարպով և Թափին ի Քասաղ առ Օշականաւ (134). Փարպոյ ջուրն կոչի և Շաղբերդաւ ջուր:

130. Ցարևմից վտակացս և ի հարաւոյ վիՃակացն յիշելոյ կայ ՍԱՐՏԱՐԱՊԱՏ վիՃակ, համանուն քաղաքաւ յեղբ Քալակիչի գետակի, շինեալ յամին 1819 ի սարտարէն Երևանայ, աւերակօք հնոյ քաղաքի. որում ընդ հուսկ սիրացեալ Ռուսաց՝ ամրացուցին և ևս զբերդն. են ի նմա ի մերայնեայց տունք իբրև 70: — Ի հարաւոյ քաղաքին գլխաւոր գեօղ է ՂԷՀՐԻՒ, 70 հայեցի տամբք և նորաշէն եկեղեցեաւ: Ձեզնից գեղջս և ի հարաւոյ ԹԷՖԷՒԻՒ գեղջ կան ի կարմիր լաւաքար բլրի կամ բարձրաւանդակի սակաւ ճեացուածք առաջնոյն և հնագունի քարագամօր Հայոց, այն ինքն է ԱՐՄԱՒԻՐ, շինեալ ԱԱրամայեայ ի Հայկայ Թոռանէ իբր 4200 ամաք յառաջ. և ընդարձակեալ ի Հարմայէ որ ջրբորդ ԱՅՐ. մայեայ, այն որ ի բարձու բլրին կանգնեաց զամբողն, յորոյ յաշտարակին երկաթի կարճիւ վարեաց որդի նորա քաջն Արամ զՆիւքար Մարաց իշխան. ամս աւելի քան ՚2300 մայր և Թագաւորանիստ քաղաք լեալ Հայոց, ապա սակս հեռանալոյն ի նմանէ ԵրասխաՀ գեօղ և անջուր Թողեալ զտեղին, միանգամայն և զլեալ ի հղօր պաշտպանութենէ ալեացն, լքաւ Արմաւիր յերուանդայ բռնաւորէ արքայէ. այլ տակաւին նշանաւոր էր տեղին և ի Ե դարու, և ոչ է յայտ երբ խափան աւերեալ անչքեցաւ. զքարինս դերբեկացն վարեցին ի շինուԹիւն Սարտարապատու և Շէհրիարայ, ճնան տակաւին և ի տեղւոջն և ի գագաԹան բլրին: Երևի և հին հունն երասխայ Գ-ու-ր-ու Աբաղ կոչեցեալ:

131. Ընդ մէջ Քալակեարթ գետոյ և Ախուրեանի և երասխայ կան ԲԱՐՁՆԻՍ և ՍՀՏԱԼՈՒ վիՃակք 30 գիւղովք, մասն Արշարունեաց կամ երասխաձորոյ. և ի սմա Ախուրեանն խառնի ՀՅերասխ. յարևելեան անկեան խառնրդոցս ի ՍՀամՀլու վիՃակի կան աւերակք ԵՐՈՒԱՆԴԱԿԵՐՏ աւանի, դեղեցիկ դաստակերտին Երուանդայ՝ հանդէպ Երուանդաշատայ նոր քաղաքաւր (41), որ յարևմտեան անկեան խառնրդոց գետոցն. յերկոսին ևս գերբուկք սեաւ և կարմիր լաւաքարից, ճնացուածք գերեզմանաց քրիստոնէից և եկեղեցեաց. յորոց մի և Գ-ԸՂԶ-Գ-ու-Է կոչեցեալ, կիսաւեր տաՃար մեծ և հոյակապ. բազում և այլ ճնացուածք հնոց շինուածոց են յերկոսին ևս ափունս գետոյն մեծի երասխայ, որ խաղայ ընդ բովանդակ դաշտս Արարատեան, զոր հինքն օտարք Երասխեան դաշտ (Araxenus campus) կոչէին. և նա է սեպհականն բնաւայր պայազատութեան Հայոց ազգի:

132. Ցարևելից վիՃակացս ամենեցուն, և յարևմից լերինն Արայի և Հրազդան գետոյ և Հարաւային արևմտեան սահմանաց Երևանայ՝ ձգի վիՃակն ԿՈՐԻ կամ գաշտն Վաղարշապատու, երկայնեալ ի հարաւոյ յափանց Երասխայ՝ ցԱՆբերդ և ցսաստրատ Արագածոտ, ուսուի իջանեն նախայիշեալ գետքն ԱՅերասխ, ուռոգանելով զդաշտս բարձր 2800–2900′: Այս է բընկին ԱՅՐԱՐԱՏ գաւառ, կամ գլխաւոր մասն ԱՐԱՐԱՏԵԱՆ ԳԱՒԱՌԻ. յորում ի հարաւ կոյս գաշտին յարևելից Գաւաղայ կայ գլխաւոր տեղի նորին և նշանաւոր ընդ ամենայն Հայս ԻՎՄԻԱԾԻՆ գեօղ, վանք և աԹոռ մեծի կաԹուղիկոսին Հայոց, յ'2870′ բարձու. չորիւք փարասիոք յարևմտից Երևանայ. տեղին իիշատակի չառաջ քան զ2500 ամս, առ ԵրուանդաՀ հարք Հայկազնին Տիգրանայ, առ որով ի Շրէդ բլրի՝ որ Թռի կոչեցեալն այժմ ՈՐ ՅԱՆԷՆ ԿՈՒՊ, քեռայր նորին Վարդգէս շինեաց կամ նորոգեաց զառաջին աւանն Արտաշէտ անուն, և յիւր անուն կոչեաց Վարդգէս. յետ բազում ժամանակաց վաղարշ Հաւ Ս. Տրդատայ ընդարձակեաց զաւանն և ամրացոյց և յիւր անուն կոչեաց ՎԱՂԱՐՇԱՊԱՏ որ և ՆՈՐԱՔԱՂԱՔ կամ ՔԱՂԱՔԱՒԱՐԴԱՏ. ուր զգարնան եղանակին անցուցանէին Տրդատ և հայր նորա Խոսրով. և ատ եաես Ս. Գրիգոր զՀրաշալի տեսիլն իմման ՄիածինԲանին և զքաղաքեալն ուռամբ զՀիմունս երկրի, վանն այսօրիկ կոչեցաւ տեղին ԷՋ–ՄԻԱԾԻՆ կամ ԷՋ–ՄԻԱԾԻՆ, և անուանի եղև և է հաստատութեամբ ի նմա քահանայապետական աԹոռոյ Հայոց, որ և չէն մընայ յետ աւերման քաղաքին ի ՄԵհրուժանայ յամին 380. և երևին ցայսօր հետք պարսպաց քաղաքին յանուանեալ գեղջն Վաղարշապատ կամ ԷՋՄԻԱԾԻՆ, արտաքոյ պարսպաց վանացն և ընդ մէջ եկեղեցւոյն Հռիփսիմեայ, զոր Հանդերձ մեծաւ կաԹուղիկիւն Շողաքաւ և մատրամբ Գայիանեանց, որք ի տեղւոջ նահատակութեան և Թաղման կուսանացն սրբոց, շինեաց Սուրբն Գրիգոր. և վասն այնորիկ յայլազգեաց Իւ ՓԻՆԿ կոչի ուխտ: Ի սկզբան անգ հաստատեալ էր վանս միանձանց ի նմա յանուն Սուրբ Հռիփսիմեայ առաջնորդի. յետ աւերածոյն ՄԵհրուժանայ նորագեալ և ընդարձակեալ ի վաՀանայ ՄամիկոնենՀ՝ կարգեցաւ ընդ տեսչութեամբ Ղազարայ փարպեցւոյ. և անկեալ ընդ պէսպէս փոփոխութեամբք և անչքութեամբ՝ ի կէս ԺԵ դարու սկսաւ անգրէն